ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ ԵՎ ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Դասընթացավար՝ Լուսինե Հայրապետյան
Սյունիքի մարզի Բռնակոթի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի

Առարկան՝ Ինֆորմատիկա

Դասարան՝ 8-րդ

Դասի թեման՝ Մեդիագրագիտություն

Նպատակ՝

- Զարգացնել վիրտուալ տարածքում ճիշտ կողմնորոշվելու, տեղեկատվական տարբեր աղբյուրների հետ աշխատելու հմտություն
- Զարգացնել համացանցում անհրաժեշտ տեղեկատվության արդյունավետ որոնման կարողություններ, տեղեկատվությունները տարբերելու ունակություն, վերլուծական կարողություններ, աշակերտների քննադատական միտքը
- Ձևավորել իմաստալից բովանդակությամբ կայքերի նկատմամբ հետաքրքրություն

Վերջնարդյունք

- **Տարբերակի** փաստը և կարծիքը, հավաստի և կեղծ աղբյուրները
- **Նկարագրի** տեղեկատվությունը հանրայնացնելու և այն գաղտնի ու ապահով պահելու վտանգներն ու առավելությունները
- **Գնահատի** մեդիայի ազդեցությունը սեփական և այլոց արժեքային պատկերացումների, դիրքորոշումների և գործողությունների վրա և **արժևորի** մեդիագրագիտության դերը ժամանակակից կյանքում
- **Գնահատի**, թե ինչպես է հնարավոր մեդիան և տեխնոլոգիան օգտագործել տեղեկատվությունը աղավաղելու նպատակով

- **Անհրաժեշտ պարագաները** ՝ համակարգիչ, պրոյեկտոր, էլեկտրոնային գրատախտակ
- **Մեթոդը՝** «Շրջված դասարան»
- **Սովորել սովորելու կարողունակություն**՝ ինքնուրույն ուսումնասիրում են, օգտվում առցանց ռեսուրսներից, համադրում, վերլուծում, կատարում եզրակացություն, տարբերակում ճիշտ և կեղծ տեղեկատվությունը:
- **Թվային և մեդիա կարողունակություններ**՝ կարողանալ օգտվել համացանցից, ստանալ ճշգրիտ և անհրաժեշտ ինֆորմացիա:

Դասի ընթացքը/ տնային առաջադրանքի ստուգում

Աշակերտները տանը ինքնուրույն, համացանցից օգտվելով սովորել են մեդիագրագիտության վերաբերյալ կարևոր և առավել տարածված չափանիշները.

- **Ի՞նչ է մեդիագրագիտությունը,**
- **Ո՞վ է մեդիագրագետ սպառողը,**
- **Ի՞նչ է կարողանում անել մեդիագրագետ սպառողը,**
- **Ինչպե՞ս է հաղորդակցվում մեդիադաշտում, ընկալում ներկայացված ինֆորմացիան, վերլուծում և գնահատում**

Նախապատրաստվել են ներկայացնելու տարբեր իրավիճակներ, որոնք կարող են պատահել վիրտուալ միջավայրում: Պատրաստել են սահիկաշար PowerPoint ծրագրով:

Կատարված առաջադրանքի ներկայացում

Ցուցադրվեց մեդիագրագիտության վերաբերյալ աշակերտների պատրաստած սահիկաշարը



Տեսանյութի դիտում և քննարկում

https://www.youtube.com/watch?v=MBwKLEr3DRQ_տեսահոլովակի ուղեկցությամբ

https://www.youtube.com/watch?v=vwJvujFwmxc

Ինչպես խուսափել ապատեղեկատվությունից և կողմնորոշվել տեղեկատվական հոսքերում /հարց ու պատասխան, քննարկում/

Աշակերտները վերլուծում են մեդիագրագիտության 5 հարցերն ու պնդումները

1. Ո՞վ է հեղինակը:
2. Ո՞րն է ասելիքը:
3. Ու՞մ է ուղղված ասելիքը:
4. Ի՞նչ հնարքներ են օգտագործված:
5. Ի՞նչ նպատակ ունի նյութը:

5 հիմնական հարցերին համապատասխանող 5 պնդումները՝

- Մեդիան միշտ միջնորդավորված է:
- Մեդիայի ասելիքը միշտ արժեքներ և տեսակետ է ներառում:
- Տարբեր մարդիկ տարբեր կերպ են ընկալում ու արձագանքում միևնույն տեղեկությանը:
- Մեդիայի ասելիքը մշակված է հասնում լսարանին՝ ենթարկվելով ստեղծագործական միջամտությունների:
- Մեդիայով հաղորդվող ասելիքը սովորաբար ենթաշերտեր, նպատակներ է պարունակում ու որևէ շահ է հետապնդում:

Գործնական աշխատանք

Հանձնարարված էր ներկայացնել իրավիճակներ, որոնք կարող են պատահել առօրյա կյանքում, մեդիադաշտում, սոցկայքերում.

Իրավիճակներից արված եզրակացություն՝

- Համացանցում չի կարելի տարածել ցանկացած ինֆորմացիա, չտրվել տարաբնույթ սադրանքների, չընկնել մոլորության մեջ
- Համացանցում, առանց ընկերոջ թույլտվության, չի կարելի հրապարակել նրա նկարները
- Չի կարելի հաշվեհամարները փոխանցել ինչ-որ մեկին, որպեսզի չդառնաք խաբեության զոհ
- Համացանցում պետք է հաղորդակցվել հասկանալի, մատչելի, գրագետ լեզվով և պետք է գրել հայատառ:

Անդրադարձ

Հարցերի միջոցով կատարվում է անդրադարձ նպատակին

Ամփոփում՝

Դասն ամփոփվեց մեդիամարտ խաղով՝
https://media.am/mediabbattle/





Աշակերտներն ակտիվորեն ընդգրկված էին դասին՝ կարողացան ճշգրտորեն պատասխանել հարցերին:

Օգտագործված գրականություն

https://media.am/hy/lab/2020/04/16/17917/
https://mediainitiatives.am/wp-content/uploads/2021/04/LGrigoryan_Analysing_Information.pdf

https://media.am/hy/category/medialiteracy/

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

- Իրականացվել է ԿԶՆԱԿ հիմնադրամի կրթական նորարարություններ բաժնի կողմից իրականացվող «Մեդիագրագիտությունը՝ որպես արդյունավետ դասավանդման և ուսումնառության կարողունակություն» նախագծի շրջանակներում: